

# ՏԱՐԱՆ

## ԿԱՆԱՑ ՅԱՏՈՒԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՏԱՐԱՆԱՐԵՐԻ

ԳՐԱԿԱՐԱՆ, ԳՐԱՎԱՐԱՆԱՆԱՐ

Ա.Ա.ՏԵՐԵՆ, ՏԱՐԱՆԱՐԵՐԱՆ, ՀԱՐԱՐԵՐ

ՉԵՌԱԿԱՐԱՆ, Ա.ՀԱՅԱՏԱՐԵՑՄԱՆ

ԱՐԵՎԱՐԴ ՀԱՅԱՏԱՐԵՑԻ և Ա.ՀԱՅԱՏԱՐԵՑԻ ՔՐԵԲԵՐ



ԺԹ. ՏԱՐԻ

Բ. Երջան, Թիւ 14



ՅՈՒՆԻՍԱՏԵՐ ՈՒԽԻՆ

ԱՅՐԻ ՏԵԿԻՐ ՏԵԼՈՎԱՐԵԱՆ

ՏԵԿԻՐ Ա. Ա. ՀԵՏՈՒՂԵԱՆ

ՕՐԻՈՐԴ ՀԱՅԱՏԱՐԵՑԻ Ա. Ա. ՀՈՍՔԵԱՆ

ՕՐԻՈՐԴ ՀԱՅԱՏԱՐԵՑԻ Ա. Ա. ՀՈՍՔԵԱՆ

ՕՐԻՈՐԴ ՀԱՅԱՏԱՐԵՑԻ ՄՈՄՑԵԱՆ

ՕՐԻՈՐԴ ՀԱՅԱՏԱՐԵՑԻ ՄՈՄՑԵԱՆ

66

ՀԱՅԿԱՆՈՅՑ ՄԱՍԻՔ

Գի՞ն 40 փարա

Տպագրութիւն ՄԱԴԻՆԻ, Կալորա.

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

### ՊՈԼՍՈՑ ՀԱՅՐՈՅ

Տարեկան 50 դրամ, վեցամսեայ 25 դրամ:

### ԳԱԼԻՉՈՎԱՅՐԵԱՆ ՀԱՅՐՈՅ

Տարեկան 54 դրամ, վեցամսեայ 27 դրամ:

### ԱՐՏԱՌՈՎԱՇՐՈՅՆ ՀԱՅՐՈՅ

Տարեկան 12 ֆրանք:

Մանուշատակ առաջարկագրութեան և բերթին վերաբերող  
ամէն կարգի պահպանութեանց համար զիմել մի միայն՝

## {ԶԱԳԻԿ ՂՐՆԵՐԻ}

ՃՐԱԿԱԿԱՆ ՂՐՆԵՐԻ ԽԱՆՆԱ ՅՈՒՆԱՆԻ

ՅՈ. Բ. Ա. Թ. Ա. Թ. Ե. Բ. Թ. «Ծ. Ա. Դ. Ի. Կ»

Կ Պալու, Զալաթիա, Գուրչունլու խան, թիւ 7

## JOURNAL "DZAGHIK,"

Constantinople, Galata, Kourchoum Han, № 7.

## ՔԱԼՈՏՐԵՄԻՆԻ

### ՔՈՒԵՄԸ

ԵԿ

### ԲՈՒՏՈՒԱՆ



Բարիզի բժշկական կանա-  
ռեն վկայեալ քիմիագետ Մ.  
Ֆ. Ա. Ժ. Է. կողմէ պատրաստ-  
ուած:

Քալոտրէմինի ըստառան և քոչմը մեծ համբաւ կը վայելեն  
իրենց հաճելի յատկութիւններուն համար Առանց վերապահութեան  
կարելի է ըստել թէ ասոնք այս կարզի պատրաստութեանց ամենէն  
գերազանցնեն: Քալոտրէմինի քոչմը ամէն տեսակ օճառէ աւելի  
լաւ կը մաքրէ մորթը: Երբ ամէն օր գործածուի գեղեցկութիւն,  
թարմութիւն և առողջութիւն կ'ընծայէ արտաքին երեւոյթին:  
Իսկ քալոտրէմինի ըստառան ալ այս գեղեցիկ արդիւնքները կը  
լրացնէ, ճերմկցնելով զէմքը բնական կերպով մր:

Այս աննետան քոչմը և բուտառան կը ծախուի Բերա, Պօն Մառ-  
չէ, Կալաթա, Թիւնէլի փողոց Մ. Հիսարի, Սթանպոլ, Եէնի ձամի,  
Մ. Քլէանթէս Համօրուլոի և Մահմուտ Բաշա, Մ. Քօմթաքի Սի-  
խայիլիտիի վաճառատունները:

# ՅԱԶԻԿ

## ՃԱՐԱԹԱԹԵՐԹ

(644) Ժ. ՏԱՐԻ - ԹԻՒ 14

7 ԳԵԿՏԵՄԲԵՐ 1906

## ԽԱՄԱԿԱԼՈՒՅԻՆԵՐՈՒ ԴԵՐԸ



ԱԼՅԱՅԵԱՆ Որբանոցին քառամետեակը որ  
տաճուեցաւ տաջի կ'լրակի օր, և ասպիւղի  
մէջ, լաւագոյն տոփի մը կ'ընծայէ մեզի  
անդրագաւնալու պահ մը այդ հաստատու-  
թեան, ուր հայր, մայր չունեցող բախատղուրկ աղջիկներ, ալ-  
կիններէ քաղկացեալ ինսամակալութեան մը ինամուս զուրդու-  
րանքներուն մէջ, համեւս դաստիարակութիւնն մը կը ստանան, աղ-  
ջըկանց յատուկ ձեռարուեսաւական դիտելիքներով, և կը մնանին  
այնպէս ինչպէս թերեւս չեն սնանիր, իրենց հասակակից շա՞տ մը  
ուրիշներ, ծնողական յարկերու տակ:

Անոնք որ քիչ շատ ծանօթութիւնն մը ունին Խասպիւղի այս  
բարենպատակ հաստատութեան նոտիսորդ շրջաններուն վրայ, ուր,  
առաւել կամ նուազ անխիղճ սննասաններ, իրենց շահատակութիւն-  
ներով առիթներէ օգուտ քաղած, և աւելի իրենց անձնական շահուն  
համար աշխատած են, քան ա՛յն որբուհներուն շահուն, որոնց  
անունով է որ սակայն կը նոպատաւորուի Որբանոցը, քիչ մը  
քիչ զարմանքի և հիացումի մէջ չէ որ կը մնան ապահովաբար,  
քիչ կը տեսնեն այդ հաստատութեան այսօրուան նախանձելի վի-  
երք կը տեսնեն այդ հաստատութեան այսօրուան նախանձելի վի-  
ճակը, որուն հեղինակ հանդիսացան արդի ինստմակալուհները,

իրենց պաշտօնավարութեան միջոցին մէջ, որ հաղիւ երեք տարիւներու չըջան մը կը հաշուռի:

Եւ արդարեւ, այս կարձ ժամանակամիջոցին մէջ ի՞նչ բարեփոխումներ չներմուծուեցան այդ որդանոցին մէջ, որուն համար կրնանք ըսկել թէ, զրեթէ հիմքն նորոգաւեցաւ ըոլորովին, զարդարուեցաւ պատշաճապէս, կանոնաւորուեցաւ օրինաւորապէս, նպաստաւորուեցաւ առաւելապէս, և այս ամէնը անոր համար որ Որբանոցին Խնամակալուհիները ծշդիւ ըմբռնած էին իրենց դերը և սերտիւ փարած իրենց գործին:

Ու քանի՛ աշխատեցան Խնամակալուհիները, քանի՛ սիրու, հոգի նոուիրեցին այդ գթութեան յարկին, ա'յնքան աւելի մեծ ծաւալով և զան նպաստները՝ այդ հաստատութեան, ժողովուրդին կողմ, որ սկսաւ հարսանեկան հանդէմներու և յուղարկաւորութեանց առթիւ, Հիւանդանոցին հետ, և թերեւս անկէ ալ առաջ՝ Խասդիւղի Գաղֆանեան Որբանոցը յիշել: Տրուած նպաստները իրենց նպատակին կը յատկացուէին հոն և արդիւնքը մէջտեղ էր. ապա ուրեմն ի՞նչպէս կարելի էր որ հանրութիւնը սիրայօժար չընծայեր իր նպաստը այդ հաստատութեան, որուն մէջ կարգ, կանոն կը տիրէր, մաքրութիւն, կոկիկութիւն կար և լուռ ու մունջ գործունէութեան մը նուիրած էին իրենց անձերը, Որբանոցին Մայրապետէն սկսեալ մինչեւ ամէնէն պղտիկ որբուհին, որ իր կարգին երես ճերմկցնելիք արդիւնք մը կը պարզէր անպատճառ, ո' և է այցելուի:

Այս յաջողութեանց ո'րքան պատճառ եղած էին սակայն Խընամակալուհի յարդելի Ծիկիններուն՝ իրենց ստանձնած գործին գիտակցութիւնն ու անոնց ունեցած գերը, որուն համար ամէ՛ն չնորհաւորութեան արժեանի են անոնք, աէ՛տք է խոսոովանիլ որ, ինչպէս կ'ըսէր Ծաղիկի խմբագրութիւնը իր անցեալ շարթուան Քրոնիկին մէջ, Խնամակալուհիներուն անունը շատ մեծ գեր խաղացած էր հոն, որովհետեւ անուրանալի է թէ համբաւը և արժանիքը յաջողութեան բանալիներն են ամէն տեղ, երբ մանաւանդանձնուելու աշխատութեան մըն ալ միացած ըլլան անոնք:

Խասդիւղի ոյս աղջկանց Որբանոցին Խնամակալուհիները, տոանց բացառութեան, համբաւ ալ ունին, արժանիք ալ: Եւ տուանց վերապահութեան կարելի է ըսկել թէ իրօք, իրենց ունեցած համբաւին աղդեցութիւնը կրած է Որբանոցը, իր յառաջդիմութեան գործին մէջ, մինւնոյն ատեն նպաստաւորուելով անոնց անսահման գուրգուրանքէն եւ հողածութենէն:

Սակայն ո՞չչափ քիչ է թիւը այս կարգի Խնամակալուհիներու, որոնց անձնուիրաւթեան չօշափելի արդիւնքը ակներեւ ըլլայ: Այս

տեսակէտով՝ ո՞րքան երջանիկ ըլլալու են Գալֆաեանի որբուհիները, որոնց համար, բազդի անժառանգներ սովորական յակներդը անշարժար ըլլայ թերեւս, և որոնց՝ ա՛յնքան նախանձու աչքով կը նային ապահովաբար Հիւանդանոցի որբուհիները, համեմատաբար կանացի նուազ գուրգուրանքի և նուազ հոգածութեան ենթակայ:

Ուր եր թէ Տիկին Ասլանեան որ Գալֆաեան Որբանոցի Խնամակալուհի կարգուեցաւ վերջերս, իր աշակցութիւնը ընձեռէր՝ աւելի՝ Հիւանդանոցի մէջ հաստատուած աղջկանց որբանոցին, որ շատ պէտք ունի անոր նման անձնուէր և գիմու կիներու գուրգուրանքին, որ գժրաղղարար շատ քիչ անդամ կը վայելէ իր Խնամակալուհիներուն այցելութիւնը:

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՏԻՒՐԿՈՒԹԵԱՆ

### ԳԵՂԱՆԱԿ ԿԱՄ ՈՃ

Գիտութեան՝ միայն բնութիւնը կեղծելուն մէջ չը բովանդակուիլը բացատրած միջոցնուս, խօսած էինք նաև բուն արուեստագէտին անձնականութեանը վրայ, որ ուրիշ շատ մը մանկանացուներէ տարբերելուն համար՝ ամէն մէկ արուեստագիտական հանգամանքներ մարմնացուցած կը թուի վրան: Արուեստագէտ մը՝ երբ հնագիտական գործի մը ձեռնարկէ՝ իր սրտին և մաքին ամբողջ էութիւնը կը նուիրէ անոր, որով իր գործը՝ անոր արուեստագիտական ոգւոյն ասամբանը որոշելու պատճառ կ'ըլլայ: Այս պատճառուաւ Պիւֆօն բնագէտը՝ ոճը բուն իսկ մարդը կոչած է:

Մեծահամբաւ բանաստեղծներուն գրութիւնները կարգացող քաղաքակրթեալ մարդիկ՝ անոնց տպաւորել ուղած հանգամանքներէն մէկ քանին կիւրացինեն և խրաքանչիւր գրուածքէն տարբեր տարբեր կ'ազգուին, որովհետեւ անոնց հեղինակները՝ իրենց յատուկ ոճը և զգացումը ունենալունուն, մէկզմէկէ հեռու գրիչներ կը գործածեն: Շատեր՝ այնքան պերճութեամբ և ներդաշնակօրէն կը խօսին որ, ամէն ընթերցող կամ ունկնդրող՝ սրտին մէջ հրճուանք մը կը զգայ և իր երեւակայութիւնը միշտ անով կը պաշարուի: Կան գրութիւններ ալ — որոնց մէջ բարկութիւն և խեռ արտայայտուած է — որ մեր սրտին մէջ խորապէս զրոշմուելով մինչեւ խսկ մեր քուները կը խանդարեն իրենց նկարագրականներու հմայ-

քով : Ահա ուրեմն , այս զիտուն մարդերը իրենց յատուկ մէկ մէկ բանաձեւ ընտրած են , զոր հանրութիւնը ոճ անուամբ կրնայ զա-նազանել :

Անուանի գծագրիչները , երաժիշտները և ճարտարապետները մասնաւոր ոճեր ընտրած են , որովհետեւ միւռնայն երեւոյթը ամէն մարդ նոյն տչքով չը տեսներ և չըմբաներ : Բնութեան երեւոյթ-ները իրենց ո՛ր կէտէն որ ուշադրուին , ըստ այնմ կ'ազգեն . հետեւաբար իւրաքանչիւր արտեսատգէտ իրեն յատուկ տեսողութիւնը ունի : Սակայն այս տարբերութիւնները սովորական ար-տեսատարուներու համար չէ , այլ նշանաւոր գծագրիչներ եթէ ներ-կայացունեն , անուածածաւ մէկլմէկու ներհաջ տարբերութիւններ կը դնեն անոնց մէջ , որն որ իրենց ըմբանումներուն տարբերութիւնն է : Նմանապէս այս տեսակ հաջակաւոր նկարիչներ երբ մարդ մը նկարին , խրաքանչիւրը անոր զէմքին վրայ տարբեր տարբեր ձեւեր կուտայ : Ինչպէս Միքէլ Սնաձէլօի ձեռագործները զիտած միջոցնուս , անոնց վրայ կը գտնենք մեծափառութիւն մը կում մարդավարու-թիւն մը . Ռաֆաէլի գծագրութիւնները միշտ բնական գեղեցկու-թիւնէ և պերճամնիւրէ չեն չեղիր , իսկ Լեօնարդո առ Վինչիի պատ-կերները՝ անխուսափելիորէն հրեշտակային գեղեցկութիւններու-արտայայտումներն են : Դարձեալ անտասի մը կամ ծովեզրի մը տեսարանը պատիերացնող վարպետներ՝ զայն իրենց երեւակայածին պէս տեսնելով՝ մէկ երկուքը գեղեցիկ և մէկ քանին ալ բանաս-տեղծական երեւոյթ մը կ'ընծայեն : Աւրեմն արտեսատգիտական ամէն գործ՝ անոնց հեղինակներուն երազած երեւոյթներուն ման-րանկարն է :

Ոճը , միշտ երեւելի արտեսատագէտներուն սեփհական է , ապա թէ ոչ միմիայն մասյիտով և ներկայ չինուած տեսարանները և անձերը եթէ ո և է արտեսատգէտի մը գործերը չըլլան՝ լոկ ձե-ռագործ կը կոչուին , քանի որ ամէն կապարեայ գրիչ , որչափ ալ փայլուն ըլլայ , չը կրնար արծաթ համարուիլ :

Ճարտարապետական շմոզութեանց մէջ միմիայն նշանաւոր չէնքերուն մէջ ոճ մը կտրելի է փնտուել , միացեալ փոքր չէնքե-րուն մէջ ոճ կարելի չէ նշմարել , այլ միայն մէկզմէկու ճշգրտէն չը նմանցնելով պէտք է գոհանալ : Հետեւաբար ոճը արհեստագէտ-ներուն եւ զիտուններուն ոդին է:

Ինչպէս որ արտեսատագէտ մը իրեն մասնաւոր ոճը ընտրած է , նոյնպէս ալ ցեղ մը , գար մը և արտեսատգիտութիւն մը իրեն յատուկ ոճը ունի , որ իրեն նշանաքանն է նկատուած և անով ծանօթացած աշխարհի , ինչպէս յունական , եվրաստական , արաբա-կան ոճերը եացն : Գծագրութեան մէջ ալ վենետիկի , Ֆլորէն-

ցափ, Հոռմի և այլնի ոճերը, որոնց խրաքանչիւրը նոյն և նոյն ցեղին արուեստագիտութեանց նշանակած են: Արդ՝ արուեստագիտութեան մէջ ոճին ո՛քափ կարեւոր բան մը ըլլալը այս օրինակներէն կրնայ զիտցուիլ:

Ոճը՝ պարզապէս զիտութիւն մըն է, քանի որ անիկայ ո և կ գեղարաւեստագէտի մը զիտութեան մէջ ունեցած կարողութիւնը կ'որոշէ և անողութիւնը կը ծանօթացունէ. որեմն արուեստագէտ մը՝ ո՛քափ խելացի, իմացականութեան տէր, զի՞ միտք, և բեւակայութիւնը սուր, բնութիւնը գարուն պատշաճեցնող անձ մը ըլլայ, այնքան իր հեղինակութիւնները մէկ մէկ հրաշակերտներ կը նկատուին, իրենց յատուկ ոճը ունենալով:

Սրուեստագէտ մը ո և է ոճ մը հեղինակելու և իր գովրոցը ունենալու համար բար կարելոյն պատմագէտ և զիտութեան հըմուտ ըլլալու է: Այս հմտութեանց տէր եղող անձերը՝ զիտական կանոնները աւելի շուտ կրնան իւրացնել և որ և է ոճ մը մէկ ակնարկով որոշել թէ ո՛ր ցեղին կը պատկանի, ինչպէս նաև ամենատեղեցիկ ձեւեր միշտ իրենց երեւակայութիւնը պաշարած ըլլալով՝ օրբառորէ ոճերու կատարելագործման պատճառ կ'ըլլան:

Գեղարաւեստագէտի մը համար անհրաժեշտ եղող այս գաղափարները — զորս Ծաղիկի մէջ մաս առ մաս յայսնեցինք — այսօր աւարատծ ըլլալով, յաջորդ անգամ պիտի սկսինք մեր Բ. մասը, որուն մէջ պատեհութիւնը պիտի ունենանք յաջորդաբար իւրաքանչիւր զիտութեան վրայ մասնաւոր յօդուածներով խօսիլ: Ուրեմն յաջորդիւ:

ԱՐՈՒԵՍՏԱԿ Մ. ԳԱԼՅԱՆԵՍՆ

## ԿԱՂԱՆԴԻ ԱՐԹԻԻ

### ՄԻ ՄՏԱԾԷՔ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒԽ ԻՇՎ ԲԱՆ ՆՈՒԻՐԵԼ

ՓՆՏՈՒՑՑԷՔ

ԻՆՉՊԵՏՔ Է ԳԻՏՆԱՅ ԴԵՌԱՏԻ ԱՂՃԻԿԱԾ

ԱՆՈՒՆ ԳԻՐՔԸ

ԳԻՆ 7 ԱՐՈՒԵ

ՈՐ ԿՅ ԳՏՆՈՒԻ ԲՈԼՈՐ ԳՐԱՎԱՑԱՌՆԵՐՈՒԽ ՔՈՎ

Կեդրոնատեղին է ՍՍ.ԳԱ.ԵԱ.Ն ՏՊԱ.ՐԱ.Ն

## Գ Բ Ե Լ Ա Խ Տ

Սիրելի Մեղմնես:

Կը խոսառվանիմ որ՝ Pasteur շատ բան քաշեց չարաճճի միքրոպահերու ձեռքէն, բայց, վերջապէս յաջողեցաւ գտնել կեղծմաշկին դարմանը:

Dr. Քոյս և... էսկիչէնիրցի սալիրիչ մը թոքախտին դեղը դտան... sur le papier.

Իէօթկէնեան ճառագայթները՝ գեռ երէկ՝ Հիւանդանոցի բժըշկուկան ճարմմոյն պատիւը ազատեցին, անզուգական դերասանապետին սրունքին կոտրած ըլլալը հաստատելով։

Պրն. Ալփիար Սիմօնիկ Ալտաճաճեանի յօդուածները կը յանձնարաբէ... քնատութեան դէմ, իսկ ես անկուտիութիւնը մէկ հատիկ դեղ կը նկատեմ՝ ի մէջ այլոց... յոխորտութեան դէմ, ինչպէս Վիլլարի շօքուան... ստամոքսի տկարութեան դէմ։ Այսպէս գիտութեան յառաջդիմութեան չնորդիւ, ամէն հիւանդութիւն աւելի կամ նուազ ազդեցիկ treatment մը կ'ունենայ այսօր, ու միայն գրելախտն է որ անդարմանելի կը մնայ...։

Ո՞հ, գո՛ւն ալ, սիրելի՛ս, այս ախտէն բռնուեցար ինծի պէս, հէ՛: Բայց, չէ՛, չեմ մեղաղրեր քեզ։ Դրագէտ բառը այնպիսի քնքուշ հմայք մը, ասինքնող prestige մը ունի որ, հիմակուան աղջիկներս... տիկին կոչուելէ աւելի գրադիտուհի յորջորջուիլ կը սիրենք, թերեւս անոր համար որ վերջին անուանումը աւելի դիւրամատէլի է։

Սակայն, Մելի՛նէ, հարցումդ սխալ հասցէի ուղղած ես. իմ կարողութենէս շատ բարձր է քեզ յուցընել թէ՛ «ինչպէս կրնաւ գրագիտուհի ըլլալ»։ բայց՝ գիտե՞ս ինչ ըրի, քեզի գոհացուցիչ պատասխան մը կարենալ տալու համար, հարցումդ իմ կողմէս, ուղղեցի գարգացեալ ու սրամիտ տիկնոջ մը, որուն պատասխանը նոյնութեամբ հոս կընդօրինակեմ։

Ուշադրութեամբ կարգա՛, թերեւս անկէ օգտուի՛ս, դուն որ, որքան աղուոր, այնքան ալ ուշիմ ես։

«—Ատեն մը, կը գրէ համակրելի տիկինը, գրականութեան համար պատրաստուողներէն բնածին տաղանդ, մասնաւոր ընդունակութիւն, ու բազմակողմանի հմտութիւն կը պահանջուէին։ Գիտէք թէ՛ գիտութիւնը հսկայաքայլ յառաջդիմութիւններ ըրած է, և ամէն բանի մէջ դիւրութիւններ ներմուծած է։ Գրականութիւնն ալ չէր կրնար զրկուել գիտութեան ընձեռած բարիքներէն։ Այսօր գրագէտ ըլլալ պարզապէս եօնne volontéէ մը կախում ունի.

եթէ փափաքողը ուշադրութեամբ հետեւի հետեւեալ քանի մը պատռէրներուն՝ որոնց գործադրութիւնը . . . տաճնաբաննեայինին չափ դժուար ալ չէ կարծեմ»:

«Դիտէք անշուշտ թէ՝ գրութեան մը ամէնէն հոգեբանական մասը վերնագիրն է, որուն ընարութիւնը պէտք է մեծ խնամքի մը առարկայ ըլլայ: Ինչ որ է դէմքը՝ մարմնոյն համար, վերնաշգիրն ալ նոյնն է յօդուածին համար. չէ՞ որ գեղադէմ կնոջ մը . . . տափակութիւնները յաճախ կ'անուեսենք, նոյնպէս ալ գեղեցիկ վերնագրի մը տակ հրամցուած անհամութիւնները կը մարտուին: Եթէ ընթերցողը փափկածայակ է, և զօրաւոր ստամոքս մը չունի, tant pis pour lui! . . . Հեաեւարար, երբ գողտրիկ վերնագիրներ ընտրելու գաղանիքը իւրացնէք, ձեր յաջողութիւնը մեծ մասամբ նապահովուած է, հաւատացէք: Այսօր մէկէ աւելի գրողներ այդ բանին կը պարտին իրենց համբաւը . անուննին չեմ յիշեր հոս, չվիրաւորելու համար . . . իրենց համեստութիւնը:

«Վերնագիրի ընտրութեան չափ կարեւոր է բառերու պատշաճ գործածութիւնը: Գրութեան մը մէջ գործածուած բառերը որքան շոշազուն, հաղուագիւտ ու գեղեկերտ ըլլան, գրուածքն ալ ա՛յնքան վեհ, ա՛յնքան վսեմ ու խորիմաստ կը դաւնայ: Նոյնպէս պէտք է զգուշանալ պարզ, ժողովրդական բառերու յաճախակի գործածութենէ, և երբեմն անհրաժեշտ խակ է նոր, ինքնահնար բառեր ալ դարբնել, որպէս զի գրուածքը հասարակ մահկանացուներու հասկացողութիւննին բարձր մնայ, և չի կորմնցնէ իր չնորհաւգեղ վեհութիւնը: Ինտրայի «Ներաշխարհ»ը կրնայ այս մասին լաւ օրինակ մը ըլլալ ձեզ . . .»

«Ասկէ զատ կարող էք, մերթ ընդ մերթ գեղեցիկ հատուածներ քաղել ասկէ անկէ, և ձեր գրութեան մէջ յարմար տեղեր գործածել զանոնք: Այսպէս, վարժութեամբ, օր մը կարող կ'ըլլաք յօդուած մը ամիսովութեամբ զեանդել . . . ձեր վերնագրին տակ:»

«Վերջապէս, ուղիւրութիւն մը (գէպի Զոնկուտաք . . . եաւ լովա կամ . . . Ատտիս-Ապապա՝ տեղը խնդիր չէ) մեծ գեր մը պիտի կատարէ ձեր գրագետի կեանքին մէջ: Սնա ձեր մտքին առջև պիտի բանայ նոր, ընդարձակ հորիզոններ, և ձեր խանդավառ հոգւոյն մէջ պիտի արծարծէ վեհ զգացումներ ու բարձրաթռիչ ներշնչումներ, և մանաւանդ կարող պիտի ընէ ձեզ պատրաստելու անխուսափելի «Ճամբռ Նօթեր»ը, որ քիչ ատենէն զբականութեան մտից տոմսը թերեւս կոչուի և շատ իրաւամբ . . .»

«Ու յետոյ . . . յաջողութիւն կը մաղթեմ ձեզ, պայմանաւ որ ձեր մտքին առաջին յղացումները չհրատարակէք Ծաղիկի մէջ . . . որովհետեւ ես միշտ Ծաղիկ կը կարդամ, ըստ ձեզի:»

«Ահա բառ առ բառ աղնիւ տիկնոջ պատրաստանը, որ ապշու-

թեան մատնեց զիս։ Ես որ միամարքն կը կարծէի թէ գժուա՛ր, շատ գժուար բան է գրականութիւն ընելը . . . :

Զեմ գիտեր թէ այս պատասխանը ո՛րքան պիտի գոհացնէ քեզ։ Ամէն պարագայի մէջ, երբ ճիշդ ուղածդ չես գտներ, գտածովդ գոհանալու ես կարծեմ։

Տե՛ս, Ենովք Արմէն ալ թէև 1000 ուկիէն պակաս գրամօժիւտով։ Կին չառնել որոշած էր, բայց իր հիմակուան «Կինը»ն ձեռք ձգելու համար, գրամօժիւտ չառնելէն զատ բաւական գումար մըն ալ ինք ծախսեց . . . :

Entre nous, չես գիտեր, հոգիս, ո՛րքան կ'ատեմ սա գրամօժիւտ կոչուած սաղայէլը, որ մեր բարքերուն մէջ տակաւ շատ տիսուր ու աւերիչ դեր մը կը կատարէ։ Որքան զայրանամ, քիչ է դարձեալ։ Ազնիւ, չնորհալի աղջիկ ըլլաս, ընակը ձիրքեր, խնամեալ կրթութիւն մը ունենաս, ու . . . տունը մնաս, եթէ չունիս ուկիներու կլորիկ գումար մը, գոնէ գրամօժիւտ պահանջողներն ալ միայն արժանաւորնե՞րը ըլլային . . . :

Ու մէյ մըն ալ, այրերը զիրենք կիներէն աղնիւ, բարձր, դեռ չեմ գիտեր ինչ կը նկատեն, Սոսուած ծ իմ։

Նամակս երկարեցաւ, եթէ կ'ուղես, այս նիւթին վրայ, ուրիշ առթիւ։

Բոյդ

Սամսոն

ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԵԱՆ

## ՄԱՍՆԱԿՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

### ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ ԿԸՆԴՈՒՆՈՒԻՆ

#### “ԺԱՂԻԿ,Ի ԿԱՂԱՆԴԻ ԹԻՒԻՆ ՀԱՄԱՐ

ՈՐ ՀՐԱՊԱՐԱԿ ՊԻՏԻ ԵԼՆԵ 1907 ՅՈՒՆՈՒԱՐ 1ԻՆ

#### ԳՐԱԿԱՆ ՀԻԱՆԱԼԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՄՔ

Ե Ի

ԳՐԱԳԼՏՆԵՐՈՒ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՎ

Պէտք ԶԵ ԱՄՈՒԾՆԱՆԱԼ ԱՂՋԻԾՆ ՄՅ ՀԵՏ , Ո՞

Տաղակացուցիչ է :

Ծոյլ ՚է :

Քըծնող մըն է :

Զի կրնար սանձել իր բնաւորութիւնը և կիրքերը :

Կ'ատէ մանուկները և կինդանիները :

Մաքուր ու բծախնդիր չէ իր զգեստներու մասին :

Փոխանակ հաւատարիմ ու ճշմարիտ բարեկամուհի մը ըլլալու նենդամիստ մըն է :

Դիրքագրգիռ է , կը ծխէ և ոգելից ըմպելիներ կը գործածէ :

Որուն ներշնչումները սաւառնումներ չեն ունեցած աւելի վեր քան իր երը :

Հրեշտակ մըն է իր թեկնածուներուն ու հրէշ մը իր ընտանիքին :

Որուն համար զբօսանք և զգեստ կիսնքի գլխաւոր շահատակութիւն ու հածոյքը կը կարգին :

Տնտեսագէտ չէ և չէ ունեցած որոշ գաղափար մը ստակի արժէքի մասին :

Փառամոլ է ու միշտ կ'ուզէ որ մի միայն ի'նք սիրուի ու միմիայն ի'ր ճակտին ներբողներ հիւսուլին :

Կը նախընտրէ գեղեցիկ ցոյցը ընտիր նկարագրէն :

Կոշտ , գոռող ու խրոմտ խօսելակերպ մը ունի :

Երբեք չի մտածեր թէ իր մայրն ալ , իբրեւ մարդ , պտոյսի և կամ զուարձութեան կը կարօսի :

Կը նոււածէ սպասաւորը և կամ սպասուհին զայն ծաղրելով ու քննագատելով հիւրերու ներկայութեան :

Կ'ուզէ ամէն բանի լաւագոյնին տիրանակ առանց ուրիշները մտածելու :

Հասարակութեան ուշը զրաւած է սուղ զգեստներ հագնելով , եւ ծաղրածու մըն է ու բարձր ձայնով կը խօսի :

Բոււն կերպով փարած է նորոյթի և ուշագրութիւն չըներ ընտանեկան յարկին տակ հագած զգեստներուն մասին :

Պարտքեր ունի գերձակուհին , հագուստի ու փեղոյրի պիտոյ համար և կամ գեղեցիկ երեւնալու տեհնչէն վարակուած խարդախութիւն ցոյց կուտայ :

Բնստանիքի անգամները իր հածոյտկատարները կը նկատէ առանց անոնց երջանկութեան ջանալու :

Իր տունը հասարակ տեղ մը նկատելով՝ անզարդ կը թողու ,

ու չաշխատիր զայն հրապուրիչ ու շքեղ վայր մը դարձնելու, ու զբօսաշրջիկ մըն է:

Անխոհեմ է և կ'ըսէ թէ կարեւորութիւն չտար հաւարակութեան իրեն ըրած նախատինքներուն՝ և ինք իրեն վստահ է:

Փոխանակ ինքնազարգացման համար բարոյալից գիրքեր ու թերթեր ուսումնասիրելով՝ միշտ հեշտասէր, պադշոտ ու անբարոյ վէսպերով կը զբաղի:

Յոյցի համար, տեսած՝ նորոյթի համեմատ զգեստները կը գնէ առանց մտածելու իր մայրը որ իր հին շրջազգեստը, բեղորը են. կը գործածէ:

Աղքատ է ու հարուստի հովեր կ'առնէ, ու իրեն ամօթ ու անարգանք կը սեպէ իր մայրը իրեն հետ ունենալ պտոյտի մը առաթիւ ու իր բարեկամուհիները իր տունը հրաւիրել:

Կը մերժէ աշխատութիւնը մտածելով թէ սա՝ իր բարեկամուհիներուն իրեն հանդէալ ունեցած համարման պիտի վեստէ:

Պատասխանատուութիւն մը չղգար ընտանիքի ապրուստի մասին ու ամօթ կը սեպէ իրեն երբ իր բարեկամուհիները գիտնան թէ ինք ապրուստի մասին աշխատութեան կը կարօտի:

Կը մտածէ թէ, ինչ որ իր մօր բարի և հաճոյ է՝ իրեն անհեթեթ, գուեհիկ ու անհաճոյ է, միշտ անտեսելով իր մայրը, և կ'ուղէ որ մայրը իրբեւ գերի աշխատի, զնշուի մը պէս հադուի ու գուրգուրայ իր վրայ մինչ ինք զրօմու, նորոյթի ծառայէ, երեկոյթներու երթայ ու վէսպեր կարգայ:


Իր ծնողքը անուս ու ախմար կը գատէ, ծաղրելով անոնց վարմունքը ու գուեհիկ գատելով անոնց գաղափարները:

Կը փափաքի որ բոլոր բնտանիքը իր զառանցանքին հետեւի ու հնաղանդի, և կառարէ նոյն հետայն ինչ որ ինք կ'ուղէ, իր սիրած հւերերը ընդունի միայն, ու չուզեր որ ուրիշ մը կարգադրութիւններ ընէ տան մէջ, որ հակաւակ պարագային կը բարկանայ ու կը գուայ անոնց երեսին:

Ի մի բան ահոելի եսամոլ մըն է:

ԶԱՊԵԼ ԱՐԱՄԵԱՆ

ԱՏՈՒԱ



# ԴԱՐՈՒՍ ԱՄՈՒՍՆԱՑՈՒ ՄԵԿ ԱՇԽԱՎԱ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԸ

— Յայց ինչո՞ւ համար, Սրբուհի՛, թողոցիր որ հեռանար այդ բաղդը քեզմէ, կամ աւելի ճիշգը խօսելու համար, դուն քու ձեռքովդ ետ մզեցիր զայն. անցն մարդ կը խոսառվանի այսօր՝ թէ Փ...ը ամուսնական լաւագոյն թեկնածու մըն է, նոյն իսկ ձեր ընկերական շրջանակէն աւելի լայնածաւալ հորիզոններու համար, և փորձառու, կանխատես մայրեր հոգի կու տան իրենց աղջիկները անոր գլուխը հանելու, մինչեւ անգամ ահագին գումարներ ալ վրայ տալով: Խոհական և բանաւոր չէր բնաւ ընթացքդ, զոր գեռ սրբագրելու առիթը ձեռքդ ալ է կարծեմ, քանի որ զքեզ այնքան կը սիրէ:

Վարագոյրին թանձրամարմին էջքը քիչ մը քով հրեց Սրբուհին, և ձեղքուածքէն դուրս սպրովով պղտիկ լոյսով մը, որոշապէս աեսաւ թէ փոփոխութիւն մը կրած էր իր դէմքը, աւելի նեղութեան քան ցաւի:

— Եթէ սա սենեակին մէջ առանձին չըլլայինք, և եթէ վատահութիւնը չունենայի քու վրադ մտերիմ գաղտնասլահութեան մը, և որ աւելին, եթէ գսլոցէն ի վեր զքեզ չսիրէի, հիմայ բերան անգամ չպիտի ուզէի բանալ, այս այնտեսակ խնդրոյն համար, որուն վրայ խօսիլ ոչ ոքի արտօնած եմ, ոչ իսկ ամենապղտիկ ակնարկութիւն մը ընելու չափ: Կը հասկնաս ուրեմն թէ պարագան որքան ծանր է ինծի համար, արժանապատութեանս համար, որ ինքնիրենս անգամ կը զգուշանամ այդ սահմանները թեւածելէ:

«Բայց անցնինք թէ որ կ'ուզես քու հարցումիդ պատասխանելու, սակայն ամէնէն առաջ պարտաւոր եմ իմ կարգիս հարցում մը ուղղելու քեզի. թէ ամուսնական թեկնածուէ մը բաւական է միայն պահանջել, ընկերային բարուոք յարարերութեանց, նիւթական կարողութեան, առողջութեան, ամրասիր կեանքի և զարդացման վկայական մը, և թէ չկա՞ն անսնցմէ գուրս էական յատկութիւններ, ամէնազլիսաւոր յատկութիւններ, որոնց զոհել կարելի ըլլայ վերը յիշուած բարեմանութիւններու մէկ քանին, առողջութիւնը մէջը չըլլալով:»

Պատասխանիս հարկը չէր աեսած Սրբուհին և նշանացի հասկըցուց որ բառ չարտառանեմ. փոթանակի վեր ժողվեց քունքին վրայ սահող մաքուր մազի թել մը, և սկսաւ նորէն խօսիլ արագ, իրեն յատուկ եռանդուն կերպով մը:

— Կ'ըսէի թէ , չկա՞ն ատոնցմէ դուրս էտլան , շեշտելի յատկութիւններ , զորս ամէնէն աւելի կը զնոտհատեմ ևս էրիկ մարդու մը վրայ : Թէ ատոնք որո՞նք կրնան ըլլալ :

«Կը հասկնաս , սիրելիս որ , հպարտութիւնս որքան բծախնդիր կը դարձնէ զիս իմ բարեկամներուս ընտրութեանը մէջ , և թէ քանի՛ ցանցառ թիւով ընկերուհիներ ունիմ իմ շուրջս , աւելի յարմար լատելով առանձին մնալ , քան հասարակ և անախորժ տեսութիւններ հաստատել այս կամ այն անձին հետ : Եւ այս ըըծախնդրութիւնը թերութիւն մը ըլլալու չափ յառաջ գացած է իմ մէջս , այսպէս որ վաթսուն տարեկան կնոջ մը ընծայուած յարգանքին չափ յարգանք կը սպասեմ իմ անձիս , իմ հակասեռէս մանաւանդ . այսպէս , օրինակի համար , չեմ ներեր բնաւ որ պատուաւոր երիտասարդի մը հետ առանձին եղած ատեննիս անիկա ազատ զգայ իր անձը ոտքը ոտքին վրայ դնելու , և կամ դարձեալ իր սիկաւին անախորժ ծուխերը խատցնելով սենեկիս մէջ նեղացնելու չափ չարչրիէ զիս , չեմ ներեր դարձեալ որ այդ առանձնութենէն օգտուելով թացիկ քայլեր առնէ , հոգ չէ թէ բարոյական անմիսաս չրչանակի մը մէջ , չեմ հանգուրժեր մանաւանդ երբ զիս տղու տեղ դնելու չափ մեծ կը գտնէ իր անձը և չափէն աւելի ցը խօսի սեռիս վրան , չեմ սիրեր իր կնապաշտ ծայրայեզ հակումները , որոնք կեզծ են անլրէպ , և կը նեղուիմ բացարձակապէս շարժուածեւերու այն անսաւնձ կրթութիւնէն , որ երբեք չպիսի ներուէր մեծ կնոջ մը առջե , կ'արհամարհեմ ճախրալից ելեւէջները իր ձայնին , և կ'ատեմ մանաւանդ իր գործառնութեանց վրայ եղած մեծ խօսիկութիւնները , ամէն վայրկեան քու դիրքու շեշտելու ~~պէտք~~ . մէկ խօսքով բոլոր հողիովլս մաղձու ատելութեամբ մը կը համակուիմ այնպիսի երիտասարդի մը հանդէպ՝ որ չի գիտեր թէ ի՞նչ ըսել է կանացի զիւրազգածութիւն :

«Ահա , բարեկամուհիս , բուն այս խմորն է Պարսն Փ. ին շաղախուածը , աղնուական , հարուստ , գործունեայ , բայց . . . բաւականէն աւելի զատարկի : Եւ ևս որ աւելի հոգեկան ներդաշնակութիւն մը կը փնտուիմ սրտի ամուսնութիւնն մը մէջ , չեմ կրնար ինքինքս նետել այդ յայտնատեսիլ տարտարոսին մէջ : Հիմայ երկրորդ պարագայ մըն ալ կայ , որուն պիտի պատասխանեմ հարեւանցի կերպով :

«Հնըացն արքագրելու պէս բաներ մը կ'ըսէիր ինձի , կը ցաւիմ աւելցնել թէ առանց իմ ֆօնս թափանցելու : Ո՞չ , բարեկամուհիս , բաւական թեթեւամիտ չեմ վրայ-ձգոց ըլլալու համար եթէ նոյն իսկ ինձի արժանաւոր մէկը եղած չըլլար ան : Ինձի հա-

մար լաւագոյն է իմ՝ աղջկամն և սեսիս արժանապատռութիւնը ան-  
մատչելի պահել, քան հասարակ աղջկան մը պէս օձանալ. և ա-  
պագային երբ կուսական ձիւնաթոյք մազերուս վրան դոզդով ձեռ-  
քերով սանար մը պուրացնելու ըլլամ, երջանկութեամբ պիտի խոր-  
հիմ գէթ թէ անոնք միշտ բարձոնքի մը վրայ աճած են:»

ՀԱՅԿԱՆՈՅՑ ՄԱՌՔ

Ա.Ա.ՏԵՐԵՎՈՅԱՆԻ ԽՈՍՔ

**ԽՈՀ Ա.Ա.ՏԵՐԵՎՈՅԱՆԻ ԳԱՍՏԵՐ**

ՇՈՄԻՆ (ՍՊԱՆՆԱԼՈ) ՃԻՒՊ, ՃԻՒՊ, ԵՓԵԼ

Ունեցէ՛ք բաւական երկայն ձիւղերով շոմիններ, լուացէ՛ք  
սովիցէ՛ք, ըստ սովորութեան, բայց մի կորէք և կոթերը մի հա-  
նէք. յետոյ ամէնը մէկ կոթերէն թելով մը կապեցէք, ինչպէս  
կ'ընկն սալաթաները սազի վրայ: — Եսացած ջուրի մէջ նետեցէք  
այդ կապոցը, խորոնկ ասնի մը մէջ և թող եռայ 10 վայրկեան:  
Այս ատեն գոց կանանչ գոյն մը կը ստանան շոմինները:

Այս ընկելէ վերջ, եսացեալ չուրէն համեցէք, և պղինձէ կամ  
էմայյէ պարզուտի մը (սիւզկէճ) մէջ գրէք, որպէս զի կաթիլ կա-  
թիլ ջուրերը երթան. երբ ալ բաւական կը սովորին այսպէս մնալով՝  
մէկիկ մէկիկ ճերմակ մաքուր լաթով մը չորյնելու պէս ըրէք,  
այսինքն խսմեցէք լաթը իւրաքանչիւր շոմինի ձիւղին վրայ: Եւ  
սակայն պէտք չէ որ բոլորովին պազին: Յետոյ առանց կապոցը քա-  
կելու զրէք զայն սանի մը մէջ, սուն մէջ 100 կրամ կարագի կոյտ  
հալած ըլլայ. շոմինները մէջը պազցուցէք և վրան կարագով  
գոյեցէք նորէն, նաև զրէք քիչ մը կաթի սեր, աղեցէք, պղպե-  
ղեցէք և թողէք որ եփի այսպէս 20 վայրկեան մաղմաղի վրայ,  
բերանը գոց:

Վար առնելուդ պէս նաւակի ձեւով խոչոր պնակի մը մէջ զե-  
տեղեցէք շոմինները և գլուխները կարեցէք մկրատով:

Տաք տաք սեղան թերուելու է, այս շատ համեղ կերակուրը,  
որ կարծեմ ձեղի ծանօթ չէք, աղուոր ընթերցուհիներս:

## ԲՈՂ ՄԸ ԽՈՐՈՎԵԼ ԹԱՅԱՆՈՎ

**Առէք աղէկ բաղի ձագ մը, փորս պարպեցէք, ատըկեցէք  
մաքրեցէք և կրակին բանեցէք որ վրան մաղ մը չմնայ:**

Եթ ծաւալին համեմատական չափով սանի մը մէջ դրէք. քիչ  
մը ազատքեղ, թէֆնէ, կանանչ սոխ, խոշոր սոխ մը չոր,  
մեխակ, երկու պղտիկ սխտոր, երկու ստեպին, սահան և  
խոշոր կոյտ մը կարտգ մէջը զրէք: Այս ամբազջին վրայ աւել-  
ցուցէք «վիւան կիւվէճ»ի ջուր և կամ կտրմբած միսին սահցան  
խոշոր շերեփ մը, նաև երկու քօնեաքի գաւաթ ճերմակ անհարատ  
գինի: Բերանը գոցեցէք սանին և կրակին վրայ դրէք, (կրակը  
չափաւոր ըլլալու է), 40-50 վայրկեան թող եփի այսպէս:

Եփը աւարտելէն ետքը, բագը մէկ կողմ կ'աւանէք, պնակի մը  
մէջ և համեմունքներով եփուած ջուրը պարզուտէ մը կ'անցընէք,  
որով ընտիր թացան մը կ'ունենաք. այս թացանին իւզերը քիչ մը  
առնելով երեսէն քիչ մըն ալ կ'եփիէք, ապա վար առնելով վրան  
կը քամէք կես լէմոնի ջուր, և քիչ մըն ալ սև պղպիդ կը ցանէք:

Թացանն ու բագը դատ զատ կը բերուին սեղան:

ՔՐԻՍՏԻՆԵՑ ՄԵԼԻՔԵԱՆ

## ԵՐԱՋՆԵՐԷ

Երկինքին պէս, շճակին պէս ջինջ, աղուոր,  
Դարուժանի սլրտիս մէջ,  
Նոր երազիներ, կը բողբոցին ամէն օր  
Հոն բանալով մի նոր հը:

\* \* \*

Այգուն անուշ շողերուն հիս զիս զգուեն,  
Այդ կեանիները անըսուներ,  
Առանց որնեց, վանուկ հոգիս իր ցաւեն  
Մութ աշխարհներ պիս' բոյէր:

\* \* \*

Հեռուն, հեռուն, երազներուն սա՛ կազմած  
Զիզ բափորը կը դիտեմ:

Ահ, առնից մեջ, հաս մը կայ որ. ով Աստուած  
Միշտ կը ժամի ինձի դիմ.

\* \* \*

Թովուած, դիրուած, զոր հատնումով անձկագին  
Ասոր կ'ըղձամ անիրնայ,  
—Վանական մը, որ առաջըլ սեւ խաչին  
Մոմի մը պէս կը մըխայ:

\* \* \*

Սեւ խոկերըս, մեկիկ, մեկիկ կը ցեղին  
Հաղուէի պէս անտեսիլ  
Ու փափաքը կ'ունենամ ես, սէր — երգին:  
—«Երազըս և միշտ սիրուիլ:»

Մաղմիսս

ՎԱՀԱՆ ՌՍԿԵՐԻԶԵԱՆ

## Ի՞ՆՉ Կ'ԼՍԵՆ

——————

Յօնքերը .— Յօնքերը կը լրացնեն աչքերու լեզուն: Եթէ իրար  
միացած են, կը նշանակեն թէ ենթական յամառ է, միեւնոյն տ-  
տին նախանձու: Եթէ մէկզէկէ հեռու են, կը նշանակեն թէ  
ենթական անուշ լեզու մէկն է:

Այս յօնքերը որոնք նուրբ են ու փափուկ, կը ցուցընեն թէ  
ենթական արուեստագէտ մըն է և կամ գեղարուեսար սիրահար:

Իսկ այս որ առաստ յօնքեր ունի, և հեռուէն թանձրութիւն  
մը ցոյց կուտայ, անպատճառ մտքի տկարութիւն մը ունի ըսել է:

Այս բոլորը նկատի առէք և տեսէք թէ ո'քափի իրաւացի պիտի  
գտնէք: Ես ինքս չառ փորձած եմ ու համոզուած անոնց ճշմար-  
տութեանը:

Զենքերը .— Որպէս զի ձեռք մը գեղեցիկ ըլլայ, պէտք է որ  
բաւական մեծկակ ըլլայ այն՝ ինչպէս նաեւ մարմնոյն համապա-  
տասխան: Այս որ իր մարմնոյն համապատասխան ձեռք մը չունի  
եւ լնդհակառակը կարճ ձեռք մը՝ յոռի նկարագիր մը ունի տպա-  
հով: Այն որ, հակաղարձաբար, իր մարմնոյն միւս մասերուն  
բազգատմամբ երկար ձեռք մը ունի ըսել է:

Կարձ և կոշտ մատներ ունեցող և խորունիլ ափ մը պարունա-  
կող ձեքերն ալ ծուլութիւն, թեթեւամառութիւն և անհոգութիւն  
կը ցուցընեն :

Եթէ մատները հաստ ըլլան, կրկին անտարբերութիւն ցոյց  
կուտան :

Երկայն, նեղ մատներն ալ գուեհիկ նկարագիր մը կը ցուցնեն,  
նկարագիր մը որ անտանելի է, և ծայրայեղօրէն եսապաշտութիւն  
կը բռուէ :

Կարձ և նուրբ մատները միւս կողմէ՝ շատախօս, տգահ և  
դրամասէր մարդու մը կը վերաբերին :

Հին աւանդութիւն մը կ'ըսէ .

«Երբ ձեռքերը, բազուկները այնքան երկար են որ մինչեւ  
ծունկը կը հասնին, հոգեւկան կորով մը և զեղեցիկ յատկութիւն-  
ներ ցոյց կուտան :

Մատները .— Եթէ համեմատական մեծութիւն մը ունին ու գե-  
ղեցիկ կ'երեւան, լաւ նկարագիր մը կը յատկանչեն :

Եթէ պղտիկ են ու նուրբ՝ ջղայնութիւն :

Եթէ շատ լայն անջրպետ մը կայ մատներուն միջեւ, շատա-  
խօս, թեթեւ, անգալանապահ, եւ անձնասէր է ուրեմն ենթական :

Մէկը միւսին մէջ սեղմուած մատները խնտյասիրութիւն կը  
յատկանչեն :

Եղունգները .— Վարդագոյն եղունգները հաստառամտութիւն  
և կամքի գիտակցութիւն կը ցուցնեն : Սրածայր եղունգները՝ նի-  
շար մատուցներով՝ կիրք և չարութիւն կ'արտայատեն : Մոխրա-  
գոյն, տժգոյն, և կլոր եղանգ ունեցող մարդերէ ալ զգուշանա-  
լու է, որովհետեւ ամէն աեսակէառվ մւասակար կ'ըլլան :

Բիծերը .— Երբ մէկը ճական վրայ բիծ մը ունի, տատուաւոր  
և բարեացակամ մէկն է : Եթէ կին մըն է որ իր ճական վրայ բիծ  
մը կը կրէ, ընդհակառակը անպատուաւորութիւն կը ցուցնէ : Եթէ  
այր մարդուն ճակամի բիծը յօնքերէն վեր կը գտնուի և կամ ա-  
նոնց բոլորափը, այնողէս կը զուշակուի թէ գեղեցիկ և բարի կնոջ  
մը հետ պիտի ամուսնանա :

Այն կինը որ այս միեւնոյն յատկանիշները ունի, հարուստ  
ամուսնութիւն մը պիտի կնքէ՝ եթէ խարտեաշ է :

ԶԱՊԷԼ, ՄՈՄՃԵԱՆ

# ՆՈՐԱԶԵՒՈՒԹԵԱՆՑ ԲԱԺԻՆԸ

## ԶՄՐԱՆ ԿԵՐՊԱՍՆԵՐ

Ահաւասիկ ձմեռը եկաւ իր բոլոր ըրտուն ու առաքուկ գեղաւանեսիկ զգեստներով : Ինչ աղօւոր են սա կապոյտ ու կանանչ խոշոր եխուները , գոյ գոյներու վրայ , իրերածոյլ մութ երանդներով , առաւօտեան պայոյտներու յատուկ զգեստներու համոր : Զանոնք կը զարդարեն կալօններով , սեւ սարեկնով և կամ իր կերպասէն պիհներով : Այս վերջին կերպ զարդարումը խիստ վայելուչ է մանաւանդ :

Յաճախաղէս են նաև սեւ սարեկնէ ժիշեներ , զարդարուած չինական պոօտնիներով և կամ կապոյտ , կանանչ գոյներու վրայ պողբոններով : Այս ժիշեները վեստերու մէջէն շատ սիրուն օռնը ման մը կը կազմեն :

Եխուէ թափրաները խիստ գնահատուած են ասուիէ հագուստներու վրայ . անոնք ներդաշնակ և զուարիթ պչրանք մը կուտան հագուստին : Ասկէ զատ յարմարագոյն ալ են նախորդ տարուան հագուստները նոր ընելու պատրաստութեան , քանի որ անցեալ տարուան նորաձեւութիւնն ալ ընդունած էր եխուն , իրը զարդ : Հետեւարար , անցեալ տարուընէ մնացած հագուստ ունեցողները պիտի ուրախանան :

Բայց զեւ ի՞նչ կը հագնին . — երամին , յանրվա , ասուի , թավիշ , եղիկն , թօքլեն :

Քաղքենի արդուղարդի յատուկ եղող թաւիշները չա'տ շատ թոյլ են , մառորը , պուա , թօք , կոհիպէծ , ֆիւմէ , յարօն , եղեգան , զիպըին են . գոյներով : Բոլոր այս գորչի և կապոյտ մէջ տարութերով գոյները քաղցր հրապոյր մը ունին , տաքուկ և ալեծուփերով , որոնք մուշտակներու պատրանքը կուտան : Ասոնք կը զարդարուին կալօններով , գունաւոր տանթէններով , բաշլմանընդիներով , համագունակ թափրայէ շինուած ծաղիկներով , ևայլն :

Յաճախ գունաւոր տանթէլ մը միակ զարդը կը կազմէ հագուստի մը , բայց այդ պարագային յորդառատ կերպով կը դորձածուի և շատ աղէկ տեսակէ ըլլալու է :

Զմոռնանք յիշելու մետաքս և բուրդ եղիկնին տարած յաղթանակը նաև նորաձեւութեան մէջ : Այս հրասուածքը մեղի շատ մը թուալեթներ ընել կուտայ , թէ այցելութեանց և թէ հանդիսաւունք է :

ւոր օրերու յաստեկ զգեստներու համար : Ատիկա փոփոխութիւն մը պիտի մոցնէ այն հասարակ և սովորական դարձած կերպամներու ցուցակին մէջ, զոր մամաներն ու տարեց կիները կը պաշտեն :


Էօլիկնը զարդարելու համար կը գործածուի մետաքսէ կալոններ, տանքիներ և սեւ կիւփիւու:

Իսկ ցուրտ օրերուն համար կան ու կը մնան տաքուկ տառւիչ պէտ սաները, վիօլեր, մօվ, մուս, թաւիչներով, նաեւ յառաջիւղէ կարձուի վկարերը:

Տիբոհնի ԿիւլՊէնգեան

## ՓՐՈՒԻԿ ԿԱՆԱՑԻ ԱՇԽԱՌՀԵՆ

### ԿԻՆԵՐՈՒ ԲԺԻՇՎԻ ՄԸ ՊԵՏՔԸ “ԾԱՂԻԿԻ” ՄԵԶ



— Ասուած իմ, գետնիդ հողերը լզուցուտեմ:

— Վույ, քարէ կարկուա ըլ գայ նը՝ քիչ է :

— Ասուած տուշմինս գլխուն էսպէս ձօն չքերէ :»

— Թա՞ հողուս տունը կը ցուի օր չըսեմ քի աղէկ էզան :

— Ա՛յս, էս կրող կարդացողները, իճառ էնողը չի հանգչի պառկած աեղը, տրհա էլեր կ'ըսեն քի աջիրներուն կարդալ սորվիլ պէտք է . հրլէ օր շատերը չեն գիտեր, էկեր օր գիննային նը էսպէս բաներ տըհա շատ տի պատայիր . . . և . . . շաղիաղիութիւնն քանի նոցա:

Ա՛լ չի կրցի զիմանալ, ա՛լ չիրցի բերանս չի բանալ, ես որ լուիկ մնչիկ մտիկ կ'ընէի և ուշադրութեամբ կը հետեւէի կանացի այս խօսութառութին :

— Զէ՛, չէ՛, խեղճե՛ր, եթէ մեր աղջիկները հիմնովին կարդալ գիտնային, տասնկ բաներ երեւք պիտի չպատահէին :

Գրեթէ ամէնքը մէկն խօսքիս թելը կարեցին :

— Հա՛, հա՛, հրլէ օր քիչ մը ուշ բացիր բերանդ էսօր, էլէ՛ք, էլէ՛ք, էս հարանուկան քարտղները շատ էրկան են, մտիկ էնելու նէ՛ վախթ ունինք, նէ՛ խուլին :

Ամէն անգամ որ ծանրակշիւ հարցի մը հանգիստես կ'ըլլայ հասարակութիւնը, և ամէն ուր որ՝ երեւք կամ աւելի կիներու հաւաքոյթը կը տեսնես, առանց մտիկ ըրած իսկ ըլլալու, հասկցիր թէ անպատճառ նման causeurie մըն է որ տաք ու ոգեւոր վի-

ճտրանութեամբ մը տեղի կ'ունենայ և լքմբադաբար ամէն անդամ  
ալ վերջ կը գտնէ՝ յանցանքը, մեղքը ուսման ճիւղը փաթթելու  
եղակացութեամբ. խեղ զն ուսում:

Նոյեմբերի առջի շաբաթներուն էր, երեք օրուան մէջ տեղւոյս  
քրիստոնեայ համայնքը հանդիսատես եղաւ երկու մանկամարդ կի-  
ներու մահուան: Այո՛, երկու մանկամարդ կիներ, որոնց տարիքը  
20էն 25ի և 30էն 35ի մէջ կը խաղար, ան փոսին յանձնեցինք,  
ո՛չ թէ բնական մահով, այլ . . . ներոշշարհի — Զրաքեանինը չի  
հասկնաք — մանկիկներու դեռափիթիթ ու աղածրի կեանքերուն  
հետ խաղալնուն պատճտուով:

Ասսուած իմ, դաստիարակութեան պակասն ու խակը դեռ  
ի՞նչ ընտանեկան փորձանքներ չպիտի բերեն մեր գլխուն: Տակա-  
ւին մեր կրթական անտարրերութեան խոր թիրիւն արթնաւլ  
չենք ուզեր: Տակաւին գեղեցիկ մեռի հիմնական դաստիարակու-  
թիւնը չենք ծաւալեր ժողովրդային ամենայետին խաւերուն մէջ:  
Տակաւին ճշմարիտ կիներ, ճշմարիտ մայրեր պատրաստելու գործ-  
նական մէթուն որդեզքրել կը վարունինք. ինչո՞ւ . . . անոր համար որ  
շտա մը ուրիշ արգահատելի բաներու վրայ՝ որդեսպան — ինքնաս-  
պան մայրերու վոհմանկ մըն ալ աւելցնենք: Դուք ի՞նչ կ'ըսէք  
այս ըաածիս, ովք բարոյախօսնե՞ր:

Ի՞նչ կ'ըսեմ, չի սխալիմ. աղջկանց վարժարաններու թիւը  
շաացնելէ առաջ ունեցածնիս գործնական, ընթացիկ, հիմնաւոր,  
արդիւնաւէտ շաւզի մը մէջ գնենք. առողջ ու բանաւոր կրթու-  
թեամբ մը օժտենք մեր աղջկիները, անջնշելի տառերով գրաչմենք  
անոնց միտքերուն մէջ Եկեղեցին հանդէպ, կառավարութեան  
հանդէպ, ամուռնին, տան, գաւակներուն՝ մէկ խօսքով ընտանե-  
կան օճախին հանդէպ ունեցած նուիրական պարտքերնին: Զի խը-  
ճողենք անոնց կոյս միտքերը խել մը ասլարդիւն ու անմարսելի  
ութիւններով. օրինակի համար երկրաբանութիւն, հանքաբանու-  
թիւն են. այն ալ երբեմն . . . եւրոպական լեզուներով: Մնացած  
ութիւններն ալ սահ հանաւոր ու սահմանափակ ձեւի մը տակ, զոր  
օրինակ գծագրութիւն սորվեցնենք այնքան մը, որ կարենան  
ձեւագործի բամնին պահանջածը հայթայթել և ո՛չ գեղարուեստ  
մշակելու համար զանոնք իտալիա ձամբելու չափ առաջ երթալ:  
Զեւագիտութեան մէջ պէտք եղածին համեմատ գծագիտական՝ ու  
տարրական բաներ եւս երկրաչափութենէն աւանդենք:< Առողջա-  
բանութիւն և ո՛չ բժշկութիւն: Աշխարհագրութիւն և ո՛չ տիեզե-  
րագրութիւն: Առանին անտեսութիւն և ո՛չ ուրիշ բան: Բնթեր-  
ցասէր և ո՛չ վիզամոլ ու մնացածներն ալ նոյն համեմատութեամբ:  
Թող ներուի կարծ կապելուս, որովհետեւ հոս դպրոցական ծրագիր

մը պատրաստել ո՛չ յօդուածիս համեստ սահմանը կը ներէ , ո՛չ իսկ ձեռնհասութիւնս :

Լրադրութեան ալ բարոյիկ ու հրահանգիչ մասը միայն ճանչցընենք . մեր բոլոր վարժուհիներուն ձեւքը՝ գէթ Հայկանոյշ Մառքի Ծաղիկէն մէջմէկ հատ տանք և ապահովաբար Խմբագրութիւնն եւս այս նիւթական աջակցութիւնէն խրախուսուած՝ նիւթերու պէս պիսութեամբ ու ճոխութեամբ Ծաղիկի ծաւալն ընդարձակելու ճիգերը պիտի կրինապատկէ ու բազմապատկէ : Վստահ ըլլանք թէ անշուշտ պիտի չմերանայ այս բանին մէջ ու պիտի ընէ , քանի որ ամէն պարագայի մէջ նիւթական քաջալերանքը բարոյական կորովին երաշխաւորանքն է :

Քաջայոյս եմ թէ Պատ . Խմբագրութիւնը պիտի ներէ համարձակութեանս որ հիմակուընէ Ծաղիկի մէկ կարեւոր ու աչքառու պակասը մատնանշած ըլլալու համար թելագրեն իրեն որ հրաւէր կարդայ մասնագէտ մանկաբարձրժիշկի մը , որպէս զի ան ալ հաճի՝ յղութեան վիճակին , տղաբերի , դահեկի (sage femme) պարտերուն , տղամանի զգուշութիւններուն , ստիճի հիւանդութեան , կարևուուրեան , նորածինի աճման , լացերուն՝ մէկ խօսնով առողջապահութեան , ատամնահանութեան եւ այլ յարակից պարագաներուն վրայ ուսումնասիրութիւն մը հրաւարակել պարբերաբար կանացի հանդէսին մէջ : (1) Եւ այն ատեն կը խորհիմ թէ , իմ կարծիքով , վերոյիշեալ երկու մանկամարդ կիներուն նման՝ վիժման խեղճ զոհերուն առջեւը կթէ առնուած չըլլայ , գոնէ թիւը կը սակաւնայ անպատճառ :

Մեր քրոնիկին բուն նիւթը կազմող ջուխատակ եղկելի զոհերուն սրտաճմլիկ մահուան թողած տպաւորութեան տակ չեմ կրնարչ գոչել , ով խիզճ սոսկասիթ , ով ձեւնարկ մահառիթ :

(1) Մեր համակրելի աշխատակցուհի՝ Տիկին Աղնիւ Մ . Ղեւոնդեանի այս յօդուածը չստացած՝ Խմբագրութիւնս մասնաւոր հրաւէր մը ուղղած էր արդէն մայրաքաղաքիս բժշկական դասուն պատիւ բերող՝ ծանօթ մանկաբարձրժիշկ Տօքթ . Մութաֆեան էֆ.ի . որպէս զի Ծաղիկի այս թերին լրացնէ , քանի որ մեր հին աշխատակից Տօքթ . Նալբասի Բարիդ մեկնումով , Ծաղիկի մէջ զգալի եղած էր այդ պակասը . Ուրախ ենք յայտարարելու որ համակրելի Տօքթէուը սիրայօժար ընդունած ըլլալով մեր հրաւէրը Ծաղիկի յառաջիկայ կաղանգի թիւով պիտի սկսի շարքը Կիներու բժիշկը խորագրով իր հմտալից և օգտակար յօդուածներուն , որոնք միծ համոյքով պիտի կարդացուին անշուշտ մեր չսորհալի ընթերցուհիներէն :

Ծ . Խ .

Ամէնուս սիրելի և օգտաշատ Ծաղիկին մէջ վերջերս երևցաւ Մարի Զաքրեան ստորագրութեամբ մատը բուն վէրքին վրայ դընող ու չինիչ խմբագրական մը որ իր վերջին տողերով՝ փետուառուած սիրտ ունեցող աղջիկներուն կ'ըսէր. «Այլ եւս ըսելիք չունիմ ձեզի, թշուառ ու կորսուած աղջիկներ», ձեր մեղքերուն քաւութեանը համար սրաւազան տաճար մը վինտանցէք»։ Բայց ես շուարած մնացած եմ, չիմ գիտեր ի՞նչ պիտի ըսեմ ա'յն մանկամարդ կիներուն, որոնց խիզճին գերեղմանը իրենցինեն ա'ռաջ փորուած է։

Մամուրեք-իւլԱզիզ

Տիկ. Աշնեի Մ. Ղեիննիեսն

## ՅԻՇԱՏԱԿ ՄԸ

Ստիպողական հեռադիր մը ստացած ու առանց մնաս բարով ըսելու ինծի, մեկնած էր գարձած բնակարանէն դէսի մօտակայ գիւղ մը։ Մեկնելէն շաբաթ մը վերջ, իմացայ որ ախտավարակ՝ հօրը հիւանդութենէն, զինքն ալ հողին կը յանձնէին։

Իր ծնողքէն հեռու երեք տարուան բաժանումն մը յետոյ, վերջին տարին, Արաքսի յեղակարծ կը հեռանար իր գարժարանէն, միջավայրէ մը, ուր իր առաջին տարիներուն մէջ երազած, յարատեւ ճիգով մը աշխատած, ճգնած իր նախստիրութիւններուն յագուրդ տալու հարար ու խօլ փափաքով պղտիկուց ապագայ մը կազմած, անորջի երազային գուլաներու վրայ կառուցած էր զայն՝ տենդոտ ըզձանքով մը։

Իր մեկնման օրը քննութեան ամսուն մէջ էր ցուալի գըժքախսութեամբ և ճիշտ առառուան այդ ժամուն իր ամէնէն կարեւոր զասերէն մէկուն քննութիւնը պիտի տար, որուն մինչեւ կէս գիշեր այդ գեռատի հոգին մօմի մը վտիս, մարմրով ցոլքին առջեւ աշխատած, գրած էր շարունակ։ Այն առտուն երբ իրեն հետ մէկտեղ վարժարան երթալու համար իր սենեալը կը մանէի, իր փայտէ խարխլած գրաւելանին առջեւ բաց թուղթ մը գտայ, որուն մէջ իր մեկնման պատճառը յայտնած էր, գրելով թէ հայրը յանկարծակի անկողին ինկած էր ու զինքը ուզած։ Զիրար սիրով հոգիներու յարակցութեամբ զգացի ցաւ մը, զոր անընդհատ երեք տարիներու շրջանի մը մէջ մէկտեղ ապրով արդ որաշտելի բնեկերունիս, նախընտրած ու երթեմնի բարեկարան հետո առաւերը փոյշատակութով մը հետզհետէ կը մեծցնէր, վասով զգայնութիւններու յարաշէջ կիզումը սիրտէս բան մը կը կորզէր, հոն պարապ

մը ձգելով։ արեանս տենդուտ շրջանառութեան ցուրտ հպում մը կը թափանցէր։ Արտիս կծկումին հետ, որ մթագոյն փրփուր մը ունէր իր մէջ, յանկարծ խոյս տուին երազալին գաղափարներս, ու արցունքու աչքերս տարտամ ամույսութեան մը մէջ յառած, մոռցայ այն օրուան քննութիւններս։

\* \* \*

Հինգ տարի առաջ, երբ գպրոց կը մտնէի, նախընթաց օրը տեսած էի զայն Տնօրէնին սենեակին մէջ, երբ գացած էի հոն մօրս հետ, արձանագրուելու համար։ Իր անուշ ակնարկին մէջ, զոր աչքերուն մէջ կը չողար, կը մագնիսացնէր կարծես զիս՝ յանկարծ իմ մէջս սէր մը արթնցնելով անոր հանդէպ, այդ տասնը հինգ տարու, խարտեալ մազերով, ձկուն ու նուրբ իրանով ու սերի սեւ աչքերով աղջկան համար։ Ճակատագրի մը բերումով, որ սովոր են մարդիկ յեղյեղել միշտ, ես անոր հետ կը կապուէի, թերեւս ընդ միշտ՝ աւատկան բարեկամութեան մը կնիքով, որ հոգեւարքին մէջ կ'արթննայ ու զիտիկի մը դիմային կծկումներուն մէջ կը ցոլայ։

Իր թափանցիկ, անրջային, համակ քթթումի մը մարմնացումը եղող կոյսի անբժութիւնը՝ սկիոյ նշոյլ մըն էր որ ինծի համար կը կայծկըլուար ու փոխադարձ փարումի մը տեզի կուտար։ Մտածման պահերուս մէջ գերագոյն ու սուրբ վերյիշումով մը կ'անդրադանամմիշտ ընկերուհիս վրայ՝ Արտքափիս, որուն պատկերը գրասեղանիս վրան է, զիրքերու դէզի մը քովը, գոյնը նետած, ժամանակին հինցած շրջանակի մը մէջ։ Ու հոն, գրասեղանիս առջեւ կարգացած ժամանակ կը զգամ լալինը երկու տարտամ, հըրեշտակային աչքերու, որոնց մէջ մրժունջներ կան, թաքուն ու հեղասահ, գղունոյշ փոյժայանքներ ինծի համար և որոնք հոգիս խորը սարսուոի տրձագունդներ կուտան, իրենց թնդացումին հետ վերյուշել տալով ինծի սիրոց նախատանակ մը, որ անկեղծ փարումի մը մէջ բողըցից, ուռճոցաւ անհաւատալի արագութեանը ու յարաւեւեց մինչեւ որ մթաստուեր, ցորս ու բռւական մը ցցուեցաւ իր դէմքը ու մահուան քրափինքին մէջ խլեց զայն ինձմէ։ Քիչ մը ալու վիստաւանական խամանուածքովս, մշտատեւ յառումավ մը կ'օրօրու էր միշտ ու իմ իրականութենէ վեր, անոր առօրեայ հակաց բաթիւններէն վերծ ձգառմներուս մէջ, հեռուն անոր հետ երազային նկարսպրի մը ձիւերը իր դնէի իմ մէջօ։ Ճիշտ նոյն բժրանուածք, նոյն բնդզրուածք ու զամած էի բարեկամուհիս քով, զոր միտամիս ու կար սիրու թի առարկան կը դառնար օրէ օր։ Ան ինձմէ քիչ մը մեծ էր, հազիւ տարու մը և շատ աւելի մատցի,

աւելի կորովի իր իմացական կարողութիւններուն մէջ : Դասարաւնին առաջինն էր գիշերօթիկ աղջկանց վարժարանին մէջ ու ամէշնուն կողմէ յարդանքի արժանի էակը : Երթեք չէի մղուած գիտանալու իր պակաները, ու իմ փոքրիկ, աղայական թերութիւններս, որոնք կը սպրուէին իր համեստ ու բարոյականի անօրինակ ու հաստատ սկզբունքով մը օժտուած նկարազրին քով, չէի նըշմարեր բնաւ, կամ աւելի ճիշդ չէի ու զեր տեսնել : Նիհար, աղբաւում դիմագիծ մը ունէր ան, առանց որոշ ու կարկառուն գիծերու, ամէն բան իր դէմքին վրայ զողդոչ հմտյք մը ունէր՝ սահելու վրայ, խոտոր ու զգլիսիչ անրջային մշուշին մէջ խառնուած : Աչքերը, ա՛հ, այնքան անոյշ ու հմայիչ թարիչը մը ունէին ատոնք և որքան կը մթնային, կ'աղուորնային իմ ակնարկիս տակ, պըզափիկ մէկ կատակիս առջև : Մօր մը ժպիտը ունէր ան, որովհետեւ այդ պղտիկ տարիքին մէջ մօր մը ձեւերը ունէր, նոյն հոգը կը տածէր ու նոյն գաղափարները կը յայսնէր : Չէի կրնար վերլուծել այդ կանխահաս հոգիին, ատրիներէ տուած իր մէջ գոյացած ըմբանումներու այս յեղաշրջուած գաղափարները, բայց անոնց մէջ թաղուած խորասուզուած կ'ասպրէի, առանց խորունկը դիտելու :

Իր տխրութիւնները ունէր ան, իր մելամաղձոս ուրախութիւնները, ու ամէն ատեն երբ զինքը կը տեսնէի, պիտի գտնէի թաղծութեան մը հետքը, որ բանազբօսիկ ժպիտի մը կը փոխակերպուէր, ընդմիջուող մւայլ նայուածք մը, որ դեռ իր բիբերուն մէջ թաքուն կը մրափէր, երբ յանկարծ մակերեւոյթային վիտսակերպումի մը հնմթակայ կը դառնար : Կը տեսնէի ատոնք ու ատիկա՝ գաղափարը չէր զգացնէր ինծի, մտածելու համար անոնց վրայ բայց հիմա, իմ միայնակ, միամինակ մնացած հոգիիս մէջ, որուն մէջ չունիմ ա՛լ զինքը, կը զգամ պակաս մը ու տրամաբանօրէն միտքս կը ձգտի ցաւալի կերպով թափ տուող ներկայ դգայնութիւններուս պատճառ եղող հոգին վերլուծել, անդրադարձումով մը յիշատակին վրայ ազգել ու քննել զայն :

Հասկցած էի որ մօտակայ գտաւոէ մը Պոլիս եկած էր, թէ իր ծնողքին մէկ հատիկ աղջիկն էր և հոս եկած էր իր ուսումը կատարելագործելու : Սյապէսով հասկցած էի իր երազը, որ էր ուսուցչունի ըլլալ գաւառի մը անկիւնը, որչափ փոքր ու ձնչուած իմ օդային երազներուս քով, որոնք իրենց մէջ տարօրինակ տեսնդուութիւն ունէին և որոնք ժպիտ կը պատճառէին բարեկամունիս, երբոր պատոմէի զանոնք անոր : Ինչո՞ւ այս նկարագիրը, ինչո՞ւ եկած էր, իր մեկնումէն շարաթ մը տուած հասկցայ թէ վիշտն էր որ րայն զրած էր իր մէջ անօրինակ հակագրութեամբ մը, անհամեմատ կերպով անյարմար հոգիի մը խորը որ իդձել

կրնար ունենալ դեռ և որոնք հիմա թողուած էին սուզի մը մէջ, սիրական քրոջ մը մահուան ձնչումին տակ: Եթէ սիրտ մը ունենայինք, որ իր կրած խրաքանչիւր ծանր բախումին ազդեցութեան տակ շարունակէր միօրինակ կերպով լաբախել, քիչ ատենէն պիտի հալէր ան: Տենչերու խուռներամ սահանքներ կ'ալեկոծն այդ թրթռացող սիրտը ու սգակիրը վիշափին հետզհետէ թիթեւնալը կը զգոյ իր կուրծքին տակ, արցունքին հատնիլը, ու ներքին ոյժ մը, որ զինքը վայելքի աշխարհին մէջ կ'ուզէ նետել:

Յիշատակը նոր է, վերքը սպիէն չէ զատուած դեռ, բայց կը զգամ թէ օր մը ան իր առջի ուժգնութիւնը պիտի կորսնցնէ: Միեւնոյն ատեն հաստատ համոզումը ունիմ սակայն թէ թաքոն յուշ մը միշտ հանդչած պիտի մնայ սիրտիս խորը, ու երբ հոգեկան մէկ վայրկեանիս միտքս իյնայ ան, անոյշ ու օրօրող վայրկեաններու թախծուա երազանքը պիտի տայ ինծի:

Քերա

ՀՈՒՓՍԻՄէ Մ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

## ՏՈ.ՐԵՑՈՅՑ ՏՈ.ՐԵՑՈՅՑ ԹԷՌԴԻԿԻ ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑ

Բացարձակապէս անհրաժեշտ ամէն ընտանիքի համար, որ անուուր քանակութեամբ կ'սպասի, իր անզուգական հանգամանքով և բաղդատամբ իր պարունակութեան՝ ծայրայեղօրէն աժան գինով:

Մաքուր և խնամուած ապազրութեամբ այս տարեցոյցը ամէն գրավածառի քով կարելի է գտնել իր գեղաժպիտ դէմքով, ուրախ զուարթ:

Դին Պոլսոյ համար 8 և գաւառաց համար 10 դահեկան: Կերպունատեղի Վ. և Հ. Տէր-Ներսէսեան՝ Սուլթան Համամ:

### “ՄԱՍԻՍ, ՎԵՐՍԻՆ Կ’ԵՐԵՒԱՅ

Հաճոյքով կ'ողջունենք վերերեւումը Մասիս գրական շաբաթաթիրթին՝ որ հրատարակուիլ սկսած է նախընթաց շաբթուընէ ի վեր, ենովի Արմէնի խմբագրապետութեամբ և վարչական նոր կազմակերպութեամբ:

Մրտագին յուջովութիւն կը մազթենք մեր ազնիւ պաշտօնակցին:

Արտօնատէր Ա. ՍԱԳԱԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԾԱՂԻԿ

# ՓԱԼԱԳԱՇԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԱՂՋԿԱՆՑ

Գ. Ի. Շ. Ե. Բ. Թ. Ի. Կ. Ե. Ի. Յ. Ե. Բ. Ե. Կ. Ե. Ա. Յ.

Հաստատուած 1901 Մայիս 1ին

Գալուգիսկ, Մեօնիքրտար ճատտէսի

Բանիմաց ծնողաց գնահատման եւ քաջալերութեան մէջ հինգ  
արդիւնաւոր տարիներ յաջողութեամբ բոլորելով, վարժարանս մը-  
տած է իր ԵՐԻ ՏԱՐԵՆԴՈՒՅՆԻՆ մէջ, իրբեւ հարձրագոյն Վար-  
ժարան Աղջկանց:

Վարժարանս հաստատուած է նորագոյն լանարձակ եւ օ-  
դասուն շնորի մը մէջ, որ իր ներքին բաժանումներով և օդա-  
ւէտ դիրքովն ալ գալոցական ամէն յարմարութիւն կը միացնէ իր  
մէջ, գիշերօթիկ եւ ցերեկեայ աշակերտուհեաց համար հանգստա-  
ւէտութեան եւ առողջապահիկ ամէն պայման լրացնելով: Կ'աւան-  
դուի տոհմային լուրջ կրթութեան մը հետ՝ լեզուաց (Թուրք. Հայ-  
ֆրանս. Անգլ.) եւ գիտական անհրաժեշտ ծանօթութեանց հիմնա-  
կան ուսումն մերանսացի եւ Անգլիացի կարող վարժուհիներ իրենց  
յատուկ խնամքին եւ հոգածութեան առարկայ լրած են ֆրանս.  
եւ անգլ. լեզուաց խօսելավարժութիւնը (բուարիք): Զեսննաս ու-  
սուցիչներու և վարժուհիներու ընտիր խումբ մը ստանձնած է գոր-  
ծադրութիւնը ուսումնաց Ծրագրին որ կազմուած է շատ նպատակա-  
յարմար կ'երպավ' աղջկանց խնամեալ և հիմնական կրթութեանը  
համար: Մասնաւոր խնամքով կ'աւանդուէն նաեւ Սոսնին Տնտե-  
սութիւն, կար ու Ձեւ, Ասեղնագործութեան զանազան տեսակները  
(Ճեռքով եւ մեքենայով), նաեւ ձայնական եւ գործիական երաժշշ-  
տութիւն, մասնաւորապէս Դաշնակ: Դիշերօթիկներու համար կա-  
տարեալ սնունդ եւ ընտանեկան անթերի խնամք: Վարժարանս,  
իր տարեկան որոշեալ թոշակէն գուրս, չունի կարգ մը օտար վար-  
ժարանաց յատուկ այն բացառիկ ծախքերն որոնք տարեոյն վերջ  
պատկառելի գումարի մը կը յանգին:

Տարուան որ եւ է եղանակի մէջ նոր աշուկերտուհի կ'ըն-  
դունուի: Վարժարանին Յայտագիրը փափաքողոց կը զրկուի: Բա-  
նակցութեան համար պէտք է գրով կամ անձամբ դիմել առ Հիմ-  
նադրի-Տնօրէնն կամ առ Տեսչուին ի վարժարան:

Աշակերտուհեաց վերամուաը տեղի պիտի ունենայ 1 Սեպտ.  
Ուր, իսկ դասերու սկզբնաւորութիւնը՝ Սեպտ. 4 Բ. Հ.:

Տեսչուի

ՕՐ. Հ. Պ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Հիմնադիր-Տնօրէն

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

6—12

Գ. Ր. Պ. Ա. Ն. Ի.

Ա. Ն. Գ. Լ. Ե. Բ. Ի. Ն. Հ. Ա. Յ. Ե. Բ. Ի. Ն.

Դիմ 8 լրուշ

Կեղը ընատեղին է Սագահան Տարան:

ԲԱԼԱԳԱՇԵԱՆ

Զ. Տ. ՓԱՓԱՉԵԱՆԻ  
ԵՐԿՈՒ ԿԱՐԵՒԽՈՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
Գործնական բառարան  
Հայերէն-Անգլիերէն

Ե Ի

Զորեմիեզուեան խօսակցութիւն  
Հայ. Գաղ. Անգլ. Եւ Գերմ.

Գործ. բառարան.—Գործնական բառարանը որ կը բաղկանայ 507 էջերէ, կը պարուակէ 40000է աւելի բառեր, ոճեր, ասութիւններ, և լ. հայերէնէ անգլերէն, եւ պատրաստուած է մեծ խրամով ու զիսաւոր հստեսզութեամբ Websterի հոյակապ բառագիրքին, Անհրաժեշտ ամին անոնց օրոնք պէտք ունին ճշմարտապէս գործնական բառարանի մը:

Գին լաթակազմ 35 դահեկան

Զորեմիեզուեան խօսակցութիւն. —Այս հատորն այ, որուն մասին խօսած էինք արդէն Մադիկի մէջ, կը բաղկանայ 320 էջերէ, եւ կը պարուակէ երեք մասեր.

Ա. Մաս.—Բառուգիտութիւն,

Բ. Մաս.—Խօսակցութիւններ, այցելութեան, գնման, վաճառման, ճամբորգութեան, եւն. եւն.ի վերաբերեալ

Գ. Մաս.—Տամսեր, Նամակներ, հրաւիրագրեր եւ վաճառականական թղթակցութիւններ:

Այս հատորին չնորհիւ, որ ամէն մարդու հաւասարապէս կրնայ օգտակար ըլլալ, կարելի է խիստ կարճ ժամանակի մէջ սահուն կերպով խօսիլ վերոյիշեալ լիզունները:

Գին լաթակազմ 12 դահեկան

Երկու հատորներն ալ առանձինն առանձինն կը ծախսուին բոլոր գրավաճառաց քով, Կեղրոնատեղին է Պալենց գրատուն: 8—10  
Լարժարանաց համար մասնաւոր զեղչ

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԿ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ ՉՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

### ԱՂՃՎԱՆ ՎՏԱՆԳԸ

Գրքոյկ մը որ սահմանուած է զգուշացնել և պահպանել մասաղատի աղջիկներն ու մանկամարդ կինները, որոնք փորձուած թեան և վտանգի հանդէպ կը գտնուին:

Գինն է 2 դահեկան

Կը գտնուի բոլոր գրավաճառներուն քով և կեղրոնատեղին է Սագաեան Տպարան: